«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

2023-2024 ՈՒՍ. ՏԱՐԻ

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՄԵԹՈԴՈՎ

Դպրոց՝ «Արմավիրի հ3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ
Դասվար՝ Ռուզաննա Վարոսյան
Ղեկավար՝ Արմինե Անտոնյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3
1. Գրական ակնարկ.....4
2. Փորձարարական հետազոտություն.....7
2.1 Խմբի նկարագիրը.....7
2.2 Փորձարարական մաս.....7
3. Վերլուծություն.....10
Եզրակացություն.....11
Օգտագործված գրականության ցանկ.....12
4. Հավելված.....13
Դասապլան-1.....13
Դասապլան-2.....16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը։ Մեր երկրում աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է ՀՀ Հանրապետության պետական չափորոշչում՝ որպես հենց կրթության բովանդակային բաղադրիչ։ Յուրաքանչյուր ուսումնական առարկայի մասով սովորողների պատրաստվածությունը ներկայացվող գիտելիքային պահանջների մեջ առանձին կետով նաև նշվում է արժեքները և դրանց ձևավորումը,որոնք պետք է տա դպրոցը։

Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունի բնավ հայ դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ։ Այս նպատակն իրագործելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ու կատարելագործել ոչ միայն հայրենի և համաշխարհային գիտությունների ճյուղերը, այլև մանկավարժության անցյալի ժառանգությունն ու նրա ժամանակակից փորձն ու մեթոդաբանությունը։

Ժամանակակից դպրոցի կարևորագույն առաքելություններից մեկն էլ երեխայի մեջ իր ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքների ձևավորումն ու զարգացումն է։ Նրա խնդիրն է պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից։

Ուստի 21-րդ դարի դպրոցում դաստիարակության և կրթական գործընթացի ճիշտ կազմակերպման համար շատ կարևոր են ոչ միայն համամարդկային, այլև հայրենի մշակույթի բարձրարժեք ստեղծագործությունների ուսումնասիրումն ու ուսուցումը։

Այդ ստեղծագործություններում արտահայտված են մեր ժողովրդի հոգեկերտվածքը, աշխարհընկալումը, մարդասիրական գաղափարներն ու գալիքի երազանքները։ Հայ ժողովրդի ավանդույթներում է, որ վառ կերպով արտացոլված են մեր ազգի ազգային հավաքական բնույթը, անդրդվելի կամքը, ներքին զորությունն ու հնարավորությունները, ապրելու, վերածնվելու և հարատևելու ունակությունը, ազգերի պատմության մեջ իր արժանի տեղն ունենալու ձգտումը։

Աշխատանքի նպատակը։ Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը տարրական դասարաններում մայրենիի դասավանդման ընթացքում։

1. ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

<<Արժեհամակարգ>> հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով։ Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար։ Արժեքների թվարկված համախմբերից որևէ մեկին գերապատվություն տալը կնշանակեր ոչ մանկավարժական մոտեցում խնդրին՝ արժեհամակարգը լիակատար է և համեմատաբար ավարտուն բոլոր ներառված համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում[1]։

Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն։

Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները։ Կրելով վերոնշյալ և այլ հանգամանքների ներգործությունը, ընտրությամբ յուրացնելով դրանց ազդեցությունը՝ աշակերտը հաղորդակցվում է հասարակական մշակույթին և ձևավորվում իբրև ստեղծագործական անհատականություն[2]։

Ընդ որում՝ կրթական տարբեր աստիճաններում աշակերտն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ։ Վերաբերմունքն աշխարհի նկատմամբ և հարաբերությունը աշխարհի հետ, վերաբերմունք սեփական անձի նկատմամբ և հարաբերությունն ինքն իր հետ

[1]Բաբանսկի Յու. Կ., Պոբեդանոսցև Գ. Ա., Աշակերտների դաստիարակությանը կոմպլեքսային մոտեցում, Երևան, 1987թ., էջ 47։
[2]Բաբանսկի Յու. Կ., Պոբեդանոսցև Գ. Ա., Նշված աշխ., էջ 48։

իրականացվում են հասարակական դաստիարակության համակարգի (ուսումնական հաստատություններ, հասարակական, պետական, խորհրդակցական մարմիններ, մանկապատանեկան կառույցներ, այլ) և տեղեկատվական տեխնոլոգիաների (հեռուստատեսություն, համացանցային լրատվական միջոցներ, մամուլ) միջոցով: Կինոն, թատրոնը, հեռուստատեսությունը, համացանցը ներգործում են աշակերտի անձի վրա ոչ միայն ինքնին՝ որպես տեղեկատվության աղբյուրներ, այլ նաև որոշակի տիպարների միջոցով, որոնք դրսևորվում են այդ <<տեղեկատվական աղբյուրներից հոսող>> հերոսների վարքագծում:

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները, այսինքն՝ աշակերտի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով: Սակայն սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ արժեքների, կանոնների, չափանիշների, հայացքների յուրացումը միշտ չէ, որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին և խրախուսելի չափանիշներին:

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը տարիքայինն է, երբ սովորողի արժեքային կողմնորոշումները, արժեքային նախապատվությունները, վարքն ու բարոյահոգեբանական գծերը դրսևորվում են՝ ըստ տարիքային և կազմաբնախոսական առանձնահատկությունների: Արտաքուստ արժեհամակարգային դաստիարակության առանցքը դրսևորվում է աշակերտի վարքի ու շփման հարաբերությունների որոշակի մակարդակում՝ խոսքում, արտաքին տեսքում, ազատ ժամանակն անցկացնելու ձևում, ապրելակերպում և այլն:

Ուսուցման դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև աշակերտների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում[3]:

Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, որովհետև ընտրելով դաստիարակչական առումով հիմնական գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման

[3]Մուդրիկ Ա. Վ., Դպրոցականի անձը և նրա դաստիարակությունը կոլեկտիվում, Երևան, 1986 թ., էջ 58:

միջոցով աշակերտների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք:

Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի:

Համագործակցային ուսման կազմակերպումը

Համագործակցային ուսուցումը այլընտրանքային մանկավարժական մոտեցում է: Այն ենթանդրում է խմբային աշխատանքի համագործակցության նոր մշակույթ: Համագործակցային ուսուցման կարևոր պայմաններից է խմբի անդամների միջև դրական աջակցող փոխկախվածության ապահովումը:

Համագործակցային ուսուցման ընթացքում խմբի յուրաքանչյուր անդամ կամ ամբողջ դասարանն ակտիվորեն ներգրավված են ուսուցման մեջ, իսկ նոր գիտելիքը մշակվում ու յուրացվում է հենց աշակերտի միջոցով: Համագործակցային ուսուցման ընթացքում կարևորվում է ոչ միայն ակադեմիական գիտելիքների և հմտությունների ձեռքբերումը, այլև խմբային գործընթացի մշակմամբ հմուտ համագործակցողներ և գիտելիքների ակտիվ կիրառողներ ձևավորելը:

Համագործակցային ուսուցման տեխնոլոգիաները հետևյալն են.

1. անձի զարգացում և անհատականության ձևավորում,
2. հոգեբանական և ֆիզիկական առողջության ապահովում,
3. սթրեսի հաղթահարում,
4. առողջ փոխհարաբերությունների դրսևորում:

2. ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

2.1. Խմբի նկարագիրը

Իրականացնելով փորձարարական հետազոտություն, մեր կողմից նպատակ էր առաջադրվել երեխաների մոտ ձևավորել կայուն արժեհամակարգ: Հետազոտությունը իրականացրել ենք Արմավիրի հ3 հիմնական դպրոցի 4-րդ դասարանում: Դասարանում սովորում են 16 աշակերտ՝ 8 աղջիկ և 8 տղա: Երեխաներից 4 – ը սովորում են գերազանց, 6 – ը հարվածային, իսկ մյուս 6 -ը ունեն ցածր առաջադիմություն:Ես իմ հետազոտական աշխատանքի մեջ ներառել եմ թվով ութ աշակերտների,4-ը միջին առաջադիմության և 4-ը գերազանց առաջադիմության:---

Աշակերտի արժեքների ձևավորման խնդիրները բնականաբար լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ նաև ուսումնական հաստատություններում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով: Ուսուցման դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև աշակերտների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում:

Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, որովհետև ընտրելով դաստիարակչական առումով հիմնական գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք:

2.2. Փորձարարական մաս

Հետազոտության նպատակն է գրական երաժշտական միջոցառումների կազմակերպման օրինաչափությունների միջոցով դպրոցականների մեջ կայուն արժեհամակարգի ձևավորումը մայրենիի տարրական դասընթացում:

Հետազոտության ընթացքում մենք մասնակից եղանք գրական երաժշտական միջոցառմանը, որը նվիրված էր Հայաստանի 12 մայրաքաղաքներին: Այս միջոցառումը երեխաների մոտ կձևավորի հայրենասիրություն: Տարրական դասընթացում երեխաների մեջ հայրենասիրական արժեքների ձևավորումը բավականին մեծ կարևորություն ունի:

Աշակերտները սիրով ու բարձր տրամադրությամբ ներկայացրին բոլոր 12 մայրաքաղաքների հակիրճ պատմությունն ու մշակույթը: Միջոցառման ընթացքում հնչեցին նաև ուրախ երգ, պար, երաժշտություն:

Հիմնականում գրական երաժշտական միջոցառումների կազմակերպումը ունի երեք նպատակ՝ համախմբել դասախոսության ընթացքում ձեռք բերված նոր գիտելիքները, կատարելագործել և ամրապնդել այն գիտելիքները, որոնք սովորողը ստացել է նախորդ դասաժամերի ընթացքում և սովորողի կողմից գիտելիքների ինքնուրույն ձեռքբերումը, այսինքն՝ արտադասարանական աշխատանքների ընթացքում աշակերտներին չի մատուցվում պատրաստի գիտելիք:

Գրական երաժշտական միջոցառումները ժամանակակից մեթոդիկայի նորույթներից մեկն են: Գրական երաժշտական միջոցառումները միավորում են տարբեր առարկաների մասնագետների ուժերը և ստեղծում միջառարկայական կապերով հարուստ դասերի օրինակներ:

Գրական երաժշտական միջոցառումները ոչ միայն արդյունավետ են աշակերտների համար, այլ նաև ուսուցիչներին մղում են ինքնակատարելագործման, ուսուցիչները ձեռք են բերում նոր հմտություններ, զարգացնում թիմում աշխատելու կարողություններ և ձևավորում միջանձնային ջերմ հարաբերություններ:

3. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Աշակերտների արժեքային կողմնորոշումը բարձրացնելու համար մայրենիի դասաժամի ընթացքում մենք իրականացրեցինք համագործակցային դասեր: Ամեն հաջորդ համագործակցային դասաժամին բարդացվեց Բ մակարդակի թեստային առաջադրանքները, քանի որ բարձր առաջադիմություն ունեցող աշակերտները հեշտ էին յուրացնում տարբեր բնույթի խնդիրների յուրացումը:Համագործակցային ուսուցմանը հաջորդող դասաժամին 8 աշակերտներին տրամադրվել է գրավոր և բանավոր հետադարձ կապ: Դասաժամի ընթացքում բոլոր աշակերտները գտնվում էին ուշադրության կենտրոնում: Ընթացքում իրականացնում էին քննարկումներ, վերլուծության էին ենթարկում առաջադրանքները, փորձում էին պատկերացում կազմել, թե օրինակ տվյալ թեմայի կամ հարցի շուրջ աշակերտը ինչ կարծիք ունի, ինչով էլ կարողանում էինք պատկերացում կազմել նրա արժեհամակարգի մասին: Աշակերտները խոստովանեցին, որ բանավոր տրամադրված հետադարձ կապը ավելի արդյունավետ է:

Վերլուծելով առաջադրանքների գրավոր առաջադրանքները եկանք այն եզրահանգմանը, որ առաջադիմության աճը պայմանավորված է հետևյալ գործոններով.

1. գրավոր և բանավոր հետադարձ կապի տրամադրում,
2. երեխաների համագործակցված աշխատանքներով,
3. թեմայի հիշեցում և ամփոփում՝ զույգային և խմբային աշխատանքներով:

Աշակերտները՝ չնայած սկզբնական տարաձայնություններին, կարողացան արդյունավետ համագործակցել,օգնել միմյանց և կիսվել փոխադարձ հմտություններով:

Համագործակցային ուսուցումը բավականին արդյունավետ մեթոդ է, որը հնարավորություն է տալիս միասին քննարկումների միջոցով հասնել վերջնարդյունքի:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրությունների և հետազոտությունների արդյունքում հանգել ենք հետևյալ եզրահանգումներին.

- Ամփոփելով հարկ ենք համարում նշել, որ կրթական տարբեր աստիճաններում աշակերտն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ: Վերաբերմունքն աշխարհի նկատմամբ և հարաբերությունը աշխարհի հետ, վերաբերմունք սեփական անձի նկատմամբ և հարաբերությունն ինքն իր հետ իրականացվում են հասարակական դաստիարակության համակարգի (ուսումնական հաստատություններ, հասարակական, պետական, խորհրդակցական մարմիններ, մանկապատանեկան կառույցներ, այլ) և տեղեկատվական տեխնոլոգիաների (հեռուստատեսություն, համացանցային լրատվական միջոցներ, մամուլ) միջոցով:
- Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները, այսինքն՝ աշակերտի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով: Սակայն սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ արժեքների, կանոնների, չափանիշների, հայացքների յուրացումը միշտ չէ, որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին և խրախուսելի չափանիշներին:
- Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, որովհետև ընտրելով դաստիարակչական առումով հիմնական գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Բաբանսկի Յու. Կ., Պոբեդանոսցև Գ. Ա., Աշակերտների դաստիարակությանը կոմպլեքսային մոտեցում, Երևան, 1987թ.:
2. Մուդրիկ Ա. Վ., Դպրոցականի անձը և նրա դաստիարակությունը կոլեկտիվում, Երևան, 1986 թ.:

4. ՀԱՎԵԼՎԱԾ

Արմավիրի հ3 հիմնական դպրոց

Ուսուցիչ՝ Ռ. Վարոսյան

Դասապլան-1

Ներկայացնենք Հովհաննես Թումանյանի ‹‹Սուտասանը›› հեքիաթի դասավանդման պլանը չորրորդ դասարանի մայրենիի դասաժամի ընթացքում:

Դասարանը- չորրորդ

Առարկան- Մայրենի

Թեման- Հովհաննես Թումանյան «Սուտասանը»

Նպատակը- ա/ հատվածաբար ընթերցել և վերլուծել տեքստը

բ/ վերարտադրել տեքստի բովանդակությունը՝ պահպանելով շարադրանքի հաջորդականությունը և գործածելով նորածանոթ բառերը

գ/ ստեղծագործաբար վերարտադրել տեքստի բովանդակությունը՝ վերաբերմունք դրսևորելով հերոսների խոսքի և արարքների նկատմամբ

ԽԹԱՆՈՒՄ-Զրույց՝ «Կարո՞ղ է սուտը վնասել մարդուն» հարցի շուրջ

ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՈՒՄ- «Փոս փորողն ինքն է ընկնում իր փորած փոսը» առածի քննարկում: Կապել հեքիաթի հետ:

Հեքիաթի լուռ ընթերցում՝ առաջադրանքով

Լուռ ընթերցել հեքիաթը կպատասխանել «Ի՞նչ ասաց աղքատը թագավորին» հարցին: Լսել երեխաների առաջարկած տարբերակները:

Հեքիաթի բարձրաձայն ընթերցում սովորողների կողմից

Մեկնաբանություններով ընթերցել, զուգահեռ կատարել բառաբացատրական աշխատանք և հատվածների բաժանել:

1-ին հատված Հարցեր՝Ինչո՞ւ թագավորը իր երկրում նման հայտարարություն տարածեց: Ի՞նչ էր սպասում: Բառեր՝թագավորություն- այստեղհարստություն, ունեցվածք

Վերնագիր՝Թագավորի առաջարկությունը
2-րդ հատված Հարցեր՝ Ինչպե՞ս թագավորը հաղթեց հովվին: Է՞լ ինչի մասին կարող էր լինել հովվի սուտը: Բառեր՝թագավորն ապրած կենա- հարգալից դիմելաձև դագանակ- մահակ, ձեռնափայտ ծխամորճ- ծխելուհարմարանք Վերնագիր՝Հովվի սուտը
3-րդ հատված Հարցեր՝ Ի՞նչ սուտ էր հորինել դերձակը: Ինչպե՞ս նրան պատասխանեց թագավորը: Բառեր՝կարկատել- կտորդնել, նորոգել Վերնագիր՝Դերձակի պարտությունը
4-րդ հատված Հարցեր՝ Ո՞ր խոսքերով թագավորը դիմավորեց աղքատ գյուղացուն: Ինչո՞ւ: Ինչպե՞ս Թագավորն ընկավ թակարդը: Բառեր՝կոտ- չափել ու փայտե աման Վերնագիր՝Հնարամիտ գյուղացին

Հեքիաթի վերարտադրում

Օգտվելով հատվածների վերնագրերից դուրսբերած բառերից և արտահայտություններից՝ պատմել հեքիաթը՝ լրացնելով պակասող հատվածները:

Աշխատանք լեզվական նյութի շուրջ

Դասագրքերի բանավոր և գրավոր առաջադրանքների կատարում՝ տարբերակվածմոտեցմամբ:

Անդրադարձ նախագծին

«Սուտասանը» խմբին հանձնարարել թատրոնի մասին տեղեկություններ գրել և հաջորդ դասին ներկայացնել ամբողջ դասարանին:

ԿՇՌԱԴԱՏՈՒՄ

«Շատի հետևից ընկնողը քիչն էլ կկորցնի»առածի վերլուծություն:

Դասապլան-2

Արմավիրի հ3 հիմնական դպրոց

Ուսուցիչ՝ Ռ. Վարոսյան

Այժմ ներկայացնենք Հովհաննես Թումանյանի ‹‹Իրիկուն›› հեքիաթի դասավանդման պլանը չորրորդ դասարանի մայրենիի դասաժամի ընթացքում:

Դասարանը- չորրորդ

Առարկան- Մայրենի

Թեման- Հովհաննես Թումանյան «Իրիկուն»

Նպատակը՝

- գրական շեշտի և առոգանության պահպանումով սահուն ընթերցել տեքստը,
- կազմել պարզ նախադասություններ՝ ամփոփելով ստեղծագործության հիմնական միտքը, խոսքում օգտագործել նորածանոթ բառերը,
- խմբային աշխատանքի ժամանակ դրսևորել ստեղծագործական որոշակի կարողություններ:

ԽԹԱՆՈՒՄ- Նախապատրաստական զրույց արևի և նրա դերի մասին:

Ի՞նչ է լինում, երբ….	
Արևը ծագում է:	Արևը մայր է մտնում:
Նոր օր է սկսվում: Մարդիկ աշխատում են: Կենդանիները իրենց գործով են զբաղվում: Գրիր քո տարբերակը և մեկնաբանիր, թե՛ ինչո՞ւ ես այդպես մտածում:	Մթնում է: Ցրտում է: Բոլորը քնում են: Գրիր քո տարբերակը և մեկնաբանիր, թե՛ ինչո՞ւ ես այդպես մտածում:

ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՈՒՄ

Աշխատանք տեքստի կանխագուշակման շուրջ՝ ինչո՞ւ է արևը ամեն երեկո «անհետանում», իսկ ամեն առավոտ՝ «հայտնվում»: Լսել աշակերտների կարծիքները:

Տեքստի ընթերցում առաջադրանքով՝ ընթերցել «Իրիկուն» հեքիաթը և համեմատել բովանդակությունը իրենց կարծիքների հետ:

Զրույց տեքստի բովանդակության շուրջ՝

Հարցեր

- Ինչո՞ւ է լուսինն այդքան ուրախ:
- Ինչո՞ւ որսորդը որոշեց քնել:
- Ի՞նչ էին անում ցերեկը նապաստակը, թռչնակը, տերևը:
- Ինչո՞ւ էր հոգնելարևը:

Բառային աշխատանք:

Բացատրել		Կիրառել խոսքում
Իմաստը	Ուղղագրությունը	
մանգալ սվսվալ ականջներըսրել որոնել վազտալ	հոգնել ամբողջ որսորդ ծագել	սվսվալ ոստոստել ականջներըսրել ծլվլալ որոնել անքուն

Աշխատանք արտահայտիչ ընթերցանության զարգացման շուրջ

Ընտրովի ընթերցանություն

- Ընթերցել արևի, տերևի, թռչնակի, նապաստակի, որսորդի , լուսնիխոսքերը՝ համապատասխան հնչերանգով:
- Ընթերցել միայն հեղինակի խոսքը:

- Ընթերցելկրկնվող տողերը:
- Ընթերցել դերերով:

Աշխատանք լեզվականնյութի շուրջ:

Կատարել դասանյութից հետո տրված աշխատանքները նախ բանավոր, ապա՝ գրավոր:

Ստեղծագործական աշխատանք խմբերով

- Գտնել՝ ինչ սխալներ կան նկարում:
- Բանաստեղծությունը անվանել «Առավոտ» և արթնացնել հերոսներին:

ԿՇՌԱԴԱՏՈՒՄ

- Ի՞նչն է իրական և ի՞նչը հեքիաթային այս ստեղծագործության մեջ: Հիմնավորե՛լ:
- «Իրիկուն» ենթախումբը հանձնարարություն է ստանում ուսումնասիրել մատնային թատրոնի մասին և հաջորդ դասին ներկայացնել ամբողջ դասարանին:

Գրքում զետեղված են նաև ժողովրդական մանրապատում ստեղծագործություններ՝ տվյալ դասարանի աշակերտների մտավոր կարողություններին համապատասխան առածներ, ասացվածքներ, հանելուկներ, խաղիկներ, շուտասելուկներ և սուտասելուկներ: Դրանք ոչ միայն զարգացնում են երեխաների պատկերավոր մտածողությունը, հարստացնում նրանց գիտելիքները, այլև առիթ են ստեղծում դասարանական զվարճալի զրույցների, ուրախ և հետաքրքիր ժամանցների, բանավեճերի, խաղերի ու մրցույթների համար: